ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 դեկտեմբերի 2025 թվականի N 1776 - Ա

ՏԱՐԱԾՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Վայոց ձորի մարզի քաղաք Եղեգնաձորի Միկոյան փողոցի 23 հասցեում գտնվող դատական դեպարտամենտի նստավայրի 1297,20 քառ. մ ընդհանուր մակերեսով շինությունը, 31.6 քառ. մ մակերեսով պարիսպը, 0,2 հա մակերեսով հողամասը՝ 133,079,145 դրամ շուկայական մոտարկված կադաստրային արժեքով (այսուհետ՝ գույք, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2668173 վկայական), ինչպես նաև առկա անբաժանելի մաս հանդիսացող գույքը (օդափոխության և օդորակման համակարգ՝ ջերմային և ծխային տվիչներ, ջեռուցման համակարգ՝ կաթսա, մարտկոց, տեսահսկման համակարգ՝ տեսաձայնագրիչ, տեսախցիկ, հակահրդեհային և ահազանգման համակարգ և այլ գույք) հետ վերցնել Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտից և ամրացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին՝ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի ղեկավարի հետ համատեղ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամյա ժամկետում իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

11.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ